

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мелі».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ օ ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր քստին 2 կոպեկ:

Տ է Լ Է Փ օ ն № 253.

Հ Ի Մ Ե Ա Գ Ի Ր Գ Ի Ր Գ Ի Ր Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

Ե ի ի մ ի ա Գ ր ի գ ր Ե ա ն Դ ա տ Ե ր Ե ա ն ց, Ս ո ղ Դ Ի Ո Ն Ա Լ Է Ք Ե ա ն Գ ր Ե ա ն Բ ա ն ա ն Ե ա ն ց ի ր ամսանու հետ ցաւով սրտի յայտնում են—առաջինը իր քրոջ, երկրորդը—հորաքրոջ և երրորդը սկեսոր:

Կ Է Կ Է Լ Գ ր ի Գ Ո Ր Ե Ա Ն Թ Ա Ն Գ Ո Յ Ե Ա Ն Յ Ի

Մահը և խնդրում են բարեկամներին, ազգականներին և ծանօթներին հորձ բերել թաղման հանգիստին, որ լինելու է ամսիս 17-ին, հինգշաբթի, առաւօտեան 9½ ժամին իր սեփական տանից, Վերնափողովայն, № 18, դէպի Թանգուեան եկեղեցին:
Ամբիքը կը լինի—Երեքշաբթի և Հորեքշաբթի երեկոյեան 7½ ժամին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղացին և հողը.—ԵՆՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առողջապահական պայմանները Ստրապուի գաւառում. Երեւոյական գրականութիւնը. Դամակ երկանից. Երբքի յուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիայի գործերը. Մի նոր գծաութիւն. Դամակ Շիկիայից. Դամակ Պարսկաստանից.—ԽԱՌՆ ԼՈՒԿԵՐ.—ՀԵՈՒԱԳԻՒԿԵՐ.—ԲՈՐՈՍ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԳԻՒԼԱՅԻՆ ԵՒ ՀՈՂԸ

Մեր երկրի գիւղական ազգաբնակչութեան տնտեսական բարգաւաճման գլխաւոր արդիւններից մէկը համարվում է հողի պահպանութիւնը: Գիւղական ժողովուրդը բազմապէս զբաղվում է հողի պահպանմամբ, իսկ գիւղական համայնքներին, ընտանիքներին յատկապէս հորատածիները մնացել են նոյնը: Գիւղացին հող է որոնում, բայց չէ գտնում, ուստի նա ստիպւած է լինում համ թողնել իր ծննդավայրը, ձեռք բաշխել երկրագործութիւնից, գիւղատնտեսութիւնից և գնալ թափառել: զանազան տեղեր իր հակումներին հակառակ զբաղմունք գտնելու և կամ ամենածանր ծննդ պայմաններով հող վարձել նրանցից, որոնք շատ հող ունեն, այն է վարձկան դառնալ, աշխատել ուրիշ համար, ուրիշին հարստացնել, այդ հարստութեան մի շնչին մասը ստանալու յոյսով:

Սակայն միւս կողմից յայտնի է, որ մեր երկրում բաւական հող կայ և եթէ այնուամենայնիւ գիւղացին հողի պահպանութիւն է գտնում, զրա պատճառը պէտք է բացատրել այն աննպատակ պայմանների, որոնց մէջ գտնվում է հողատիրութեան հարցը մեր երկրում: Ոչ մի տեղ հողատիրութիւնը այնքան խախտւած, անորոշ, աննպատակ վիճակի մէջ չէ գտնվում, ինչպէս Անդրկովկասում: ոչ մի տեղ հողատիրութիւնը այնքան վեճերի ենթակայ չէ, ինչպէս մեզանում: Հարկւորութեւ, հողաբաւոր կայունները, հողաբաժինները, ամբողջ գիւղեր մինչև այսօր էլ մնում են վեճի տակ: մի կողմից զանաւորներ, միւս կողմից բազմաթիւ մասնաւոր անձինք ու վաճառքի վիճում են սեփականութեան իրաւունքի մասին և այդ վեճերը տեսնում են տասնակ տարիներ, մինչդեռ հողերը մնում են անմշակ, անխնամ, չեն շահագործվում, հետեւաբար և գիւղական ժողովուրդը գրկվում է նրանցից օգուտը: Հարստութիւնից: Յայտնի իրողութիւն է, որ մի որոշ հող կամ կարծած մինչև որ օրինակ, զանաւորների կարգով դառնայ վիճողներից մէկի անխախտ սեփականութիւն, շատ անգամ քսան, երեսուն և մինչև անգամ աւելի տարիներ են պէտք լինում: Մի գիւղական համայնք, մինչև որ կործանւում է օրէնքով սահմանված իր որոշ հողաբաժինը ձեռք բերել, ստիպւած է երկար, նոյն իսկ տասնակ տարիներով զեղերել զանազան վարչական աստիճանների և դատաստանանների դռներում: Իսկ մինչև գիւղացին ապահով չը լինի իր սեփականութեան մասին, մինչև նա հաստատ-

ապէս չիմանայ, որ իր մշակած, սերմանած հողի կտորը այլ ևս ոչ ոք իրանից չի խլի, նա, անշուշտ, չէ կարող նուիրվել երկրագործութեան և գիւղատնտեսական պարագմունքներին: Գիւղացին շատ անգամ չէ վատահամում նոյն իսկ վարձով վերցնել վեճի տակ գտնված հողերը, երկու կողմի, որ ապագայում ստիպւած կը լինի մի քանի անգամ առժեռ այդ հողերի վարձակիրը, նայելով թէ այդ հողերը վիճողներից որի սեփականութիւնը կը դառնան:

Պարզ է ուրեմն, որ գիւղական ազգաբնակչութեան տնտեսական հիմքը փարոզ գլխաւոր չարքներէն մէկը, բացի հողի պահպանութիւնից, հողատիրութեան իրաւունքի անորոշ վիճակն է մեր երկրում, այն դանդաղութիւնն է, որով ընթանում են հողատիրութեան վերաբերեալ վեճերը մեր դատարաններում և վարչական աստիճաններում:

Որքան մեզ յայտնի է, կառավարութիւնը վաղուց ուղարկութիւն է դարձրել այդ հարցի վրա և, ինչպէս արդէն հաջորդեցին մայրաքաղաքի լրագիրները, մշակված է նոյն իսկ մի ամբողջ ծրագիր, որ ներկայումս քննվում է կովկասեան գլխաւոր կառավարութեան խորհրդում: Թէև ծրագրի էական և հիմնական կէտերը դեռ յայտնի չեն, և ցանկալի կը լինէր որ նա պետական խորհրդի քննութեան ենթարկուէր առաջ, ենթարկվէր նաև մամուլի քննադատութեան, և մասնաւոր կարծիքներն ևս ավելին, բայց բոլոր լուրջ հետազոտութիւնները և փորձերը ցոյց են տալիս, որ մինչև չը կանոնաւորվի հողատիրութեան հարցը մեր երկրում, մինչև որ արմատական միջոցներ ձեռք չառնվին հողատիրութեան իրաւունքի մասին եղած անհամար վեճերը շուտով լուծելու, դժուար թէ մեր երկրի գիւղատնտեսական զարգացումը կարողանայ առաջ գնալ, նոյն իսկ եթէ հողի առատութիւն լինի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍՈՒՄԱԼՈՒԻ ԳԱՌԱՌՈՒՄ

Ստրապուի գաւառի մի նշանաւոր տարածութիւնը ընկած լինելով Արաքս գետի հովտում, իր մէջ պարսկական ճահիճների պատճառով բաւական հակառակդական պայմաններ ունի, որոնք աւելի սաստկանում են ամառ ժամանակ անտառների չորերի պատճառով: Յիշեալ աննպատակ պայմանների շնորհիւ, զանազան հիւանդութիւնների անդաւակաւ են Ստրապուի գաւառում: Տեղի, աչքացաւ, հարկիւր սովորական բաներ են, բայց այդ թեթեւ հիւանդութիւններից, տարածված են նաև բացառիկ ժամանակական հիւանդութիւնները—քոր, ելանջուր, հիմնաբոյ և այլն, իսկ վերջին տասնամակում մահմեդական թերթը թուրք ժողովրդի մէջ ընդարձակ ծաւալ է ստացել նախ Երեւանի, որը աւելի ևս ընդարձակ ծաւալ կը ստանայ շնորհիւ այն բանի, որ մահմեդականները առհասարակ խորշակում են

վերաբերվում գիտնական բժշկութեանը և շնորհիւ իրանց սովորութեանը՝ շատ դուրին կերպով վարակում են միմեանց: Սրինակ՝ Երեւանի վարակված թուրք աղամարդը առանց խղճահարկելու ամուսնանում է առողջ աղջկայ և կընոջ հետ և ընդհակառակը, առողջ թուրքը առանց զգուշանքի և կասկածի սիֆիլիսի վերաբերվում պատածի ձեռքից առնում է ծխախոտը ծրուում է, իսկ այդ մասին նկատողութիւն անողին պատասխանում է—«ամեն բան Աստուծոյ է կախված»: Առանձնապէս այս վրամագուր հիւանդութեան վրա հրաւիրում ենք բժշկական վարչութեան ուղարկութիւնը: Արիւրիսի դէմ թուրքերը ունեն մի տեսակ բժշկութիւն, որը հիւանդութիւնը աւելի վատագուր է դարձնում, այն է—մի քանի տեսակ բազադութիւններով ծուխ են տալիս հիւանդին և քառասուն օր միմայն բաղարձ են ուտեցնում, որով վերջերքը արատաւոր չորանալով թաղնվում է հիւանդութիւնը և մի քանի ժամանակից յետոյ յայտնվում է աւելի մեծ չափերով, այն ինչ սիֆիլիսը պահանջում է ներքին բժշկութիւն՝ զլխաւորապէս արեան վերաբերմամբ, որ արտաքին բան չէ: Աներկբայ ևս, որ այդ վրամագուր հիւանդութիւնը կը տարածվի նաև գաւառի հայերի և եղիլիների մէջ, միմեանց հետ յարաբերութիւն ունենալու պատճառով:

Ամբողջ գաւառի համար խղիւրում հիմնված է մի բուժարան, որտեղ բժիշկ Չեղեաղնով իր գործին վերաբերվում է ամենայն խղճով, ապահով նրա ջանքը ապարդիւն է անցնում, որովհետեւ կարիքը սաստիկ մեծ է, իսկ արշամանները անտիկ աննպատակ են: Յիշեալ բուժարանը յառաւորում են խղիլի և նրա չրջակայքի մի քանի գիւղերի հիւանդները միայն, իսկ փոքր ինչ հեռաւոր գիւղերի ժողովուրդը նոյն իսկ տեղեկութիւն էլ չունի բուժարանի մասին: Արիւրիսը տարածված է զլխաւորապէս Սիւնդու, Ղալաւա, Ամա, Հալաւամա, Ղալաւա գիւղերում: այդ տեղերը միայն ինչ յայտնի են և այդ տեղերում ամենայն խնամքով ծածկում են հիւանդութիւնը հետաքրքրողներով: Ինչ կասկած, որ այդ հիւանդութիւնը կարող է մի տարածված լինել նաև Երեւանի ինչ անշուշտ գիւղերում: Աւելորդ չէ ասել, որ այդ ցաւով հիւանդները տեղեկութիւն չունեն խղիլի բուժարանի մասին, իսկ բուժարանը տեղեկութիւն չունի վարակված վարչերի մասին:

Խղիլի բուժարանը իր ներկայ պայմաններով նպատաւոր է նաև զանազան հիւանդութիւնների զարգացման համար: Թէպէտ այնտեղ յաճախում են հիւանդներ մի քանի գիւղերից միայն, բայց դարձեալ օրական 50—150 այցելուներ են լինում, մասնաւոր ամառ ժամանակ: Գիցուր բժիշկը կարողանայ այդքանին ընկել և զեղ նշանակել բայց քիչապէս կարող են երկու ֆելդշեր այդ բոլորի համար դեղեր պատրաստել, լուանալ, կապել և այլն: Երկրորդ անպարտաւորութիւն ներկայանում է թարգմանը, որը կանոնաւոր ուտեցնել չիմանալով հիւանդի ասածը սխալ է բացատրում բժշկին, բժշկի ասածը՝ հիւանդին, աչքերն էլ միշտ կարծած են Երեւանից: Երրորդ անպարտաւորութիւնը չիմանութիւնն է ներկայացնում, որի մէջ մի օրա՛հ էլ չը կայ, որտեղ կարողանային նախ և հանգստանալ ժամերով ըստ պատի հիւանդները: Շինութիւնը մի միջանցք ունի 5 արշիլ երկարութեամբ և 3 արշիլ լայնութեամբ, որտեղ սեղմվում են երեքմե երեքսուրից աւելի հիւանդներ, որոնցից վարակիչ հիւանդութիւն ունեցողները կը վարակեն նաև անվտանգ հիւանդներին: Մեծամասնութիւնը մնում է կանգնած բաղում կամ փոշալի պատը գամում, իսկ շատերը ուղղակի թաւալում են գետին, փոշիների մէջ: Կորող է թորացաւով աչքացաւով հիւանդը բժշկվել այդպիսի վնասած

օղի մէջ երկար ժամեր սպասելով ամառվայ տաք օրերին կամ ձմեռվայ ցրտերին: Գոնէ բակում անկված լինելն մի քանի ժամեր և զրկված լինելն նստարաններ, որտեղ կարողանային հանգստանալ ժամերով սպասող հիւանդները, պաշտպանվելն արեգակի կիզիչ տաքութիւնից և փոշիներից: Վերջերքը արգելադրվել պայմաններն են, որ զլխաւորապէս ապարդիւն են անում բժ. Չեղեաղնովի աշխատութիւնը, որը ամենայն համբերութեամբ և ուղարկութեամբ զննում է հիւանդներին: Եթէ բժշկական վարչութեան սրտին մօտ է ժողովրդի առողջութիւնը, ուրեմն նա օր առաջ պէտք է աշխատի վերաբերել այդ աննպատակ պայմանները, որոնք մեծ ծախս պահանջող և զրմաւոր գործեր չեն: Անհրաժեշտ է նշանակել այնպիսի բժիշկ, որը ծանօթ լինի տեղական լեզուներին, կամ նշանակել այնպիսի թարգման, որը աննպատակ ֆելդշեր լինի և գիտնանայ տեղական լեզուները:

Կենսաբանական մնայուն բուժարանները անկարող են իրական օգնութիւն առն ամբողջ գաւառի հիւանդներին, որովհետեւ հետու գիւղերից աղքատ հիւանդները չեն կարող օրերով ապրել խղիլիում, որտեղ ապրուստը այնքան էլ էման չէ և որտեղ գալու համար ճանապարհների վատութիւնը մեծ դժուարութիւն է հիւանդների համար, ուստի անհրաժեշտ է, որ մնայուն բուժարանները ունենան իրանց չըջող մասը, այսինքն բժիշկը ունենայ երկու օգնական ֆելդշերներ ևս և երբեմն այցելելով հեռաւոր գիւղերը, տեղաւորուող ընդհանրապէս ներքին, պէտք եղած անհրաժեշտ թողնի ֆելդշերներին գործելու հրահանգ առաւել նրանց և զեղերի պաշար թողնելով: Այս դէպքում կարելի է գիւղական բժշկին օգնական կարգել գաւառական բժիշկը, որը արշամանական գործերով ստիպված է միշտ պատել գիւղերը: Այս կերպ վարվելով միայն կարելի է փոքր ի շատ իրական օգնութիւն հասնել գիւղական անհար հիւանդներին և աղէտ ժողովրդի մէջ տարածել գիտնական բժշկութեան նշանակութիւնը:

Յ. Խաչատրյան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

R. Barridon.—1) Une famille de martyrs en Arménie. 2) Arménie, coup d'oeil général et explicatif. Պարիզ 1896.

Այս երկու գրքերի ֆրանսիացի հեղինակը, պ. Բարիդոն նպատակ է դրել իրան, ինչպէս ինքն ասում է ինքն լուսաւորել այն անձերի մտքերը, որոնք դեռ լուս ծանօթ չեն հայկական խնդրին, մեր (ֆրանսիացի) թշուառ եղբայրների համար նոր համակերպը դրաւել, նուիրաբերութեան կոչումն անել յօդուր բաղձալիւ որբերի, որ թափառում են առանց ապաստարանի, առանց հայրի և երբեմն նոյն իսկ առանց չորի կտորի և ապա՝ երբ չարքն իր արմատիցն իսկ կը կտրվի, պատրաստել ամենայն կարելի հասուցումներն այն ահաւոր թըշուառութիւնների համար, որ դեռ ևս կրում են բանտարկեալները: Զեղեկալի յոյս է յայտնում այդչափ ընդդիմ չօջախն Եր, այդչափ խաղաղականութիւն և սարս արարումը, որոնք մարդկային ամենամոլորական զգացմունքն են վերաբերում, տեսնելով վերջապէս այդչափ արատաւորված անմեղներ, մի աղնիւ ցատում պիտի զգայ և պատրաստ պիտի լինի իր ամբողջ պարտականութիւնը կատարելու:

Առաջին գրքիցի մէջ, որի վերնագիրն է «Մարտիրոսների մի ընտանիքը՝ Հայաստանում» նա պատմում է մեզ, թէ ինչպէս հետզհետէ կործանվել, ոչնչացել է մի ամբողջ հայ ընտանիք տոհմագումով, սրով, հրով և վերջապէս կրօնափոխութեամբ:

Սակայն կրօնական կոյր մոլեռանդութիւնը ստ էլ չի օգնի Ռիւբլիային, որը, չը նայած իր շուրջ ճարտարկութիւններին, շարունակում է մալ շինանող մարդը։ Այս մի կարեւոր փաստ։

Ինչպէս յայտնի է, Պարսկաստանի և Հնդկաստանի շինա մանդիշակները ամեն տարի ուղարկում են ահադիւր ըմպակութեամբ դիակներ՝ բերքէլայում թաղելու համար։ Բերքէլա—իւրաւանչիւր շինյի համար մի սրբազան քաղաք է, քանիովւմ է Բաղդադի հարաւային կողմերում։ Բայց իր կարողանքներ փութադրում են մեռած իր դիակները, որոնք այդ նպատակով ծածկւում են դափրանի հաստ շերտով և կարծւում են որդերի մէջ։ Գիտկները տեղ հասցնելուց յետոյ թէ դափրանը և թէ գորգերը էժան գնով հստում են փաճառականները։ Ժամանակտը Հնդկաստանում սկսակելուց յետոյ Ռիւբլիան, որի ղին է Բէրքէլան, անսպայման արգելեց ղիակ ղիակ ներմուծումը այս ամբողջ տարվայ ընկալը։ Այս կարգադրութիւնը Պարսկաստանի համառադկում մեծ իրարանցում պատճառեց։

Այս քանի օրերը, Հնչպէս հաղորդում են լրատարներ, Կ. Պոլսում տեղեկութիւն տաղովցի պարսիկները անցել են սահմանը, որպէս ղի արեն Բերքէլան և Մէհեդ-Ալին, մերթմա մի ու-

րիչ քաղաք է, ուր անթիւ չի աւելարարներ
են գնում Թիւրք միւստրները իսկոյն ար-
տակարգ ժողով կազմեցին և վճեցին պար-
սից կառավարութեան մի վերջնագիր ուղար-
կել: Եթէ երկու շաբաթվայ ընթացքում պար-
սից զօրքերը յետ չը կանչվեն, Թիւրքերն պա-
տերազմ պիտի հրատարակէ Պարսկաստանի դէմ:
—Մի քանի եւրոպական լրագրիւնք հաղորդ-
ում են որ, ըստ երևոյթին, պատերազմ կը
լինի, որովհետեւ Պարսկաստանի համար դժուար
է պատուով յետ քաշվել:

Այդ մի և նոյն ժամանակ Թիւրքիայի մի այլ
անկիւնում, Բաղդադի թերակղզու Կոստովօի
վիլայէթում տեղի են ունենում հարստահարու-
թիւններ, որոնք սպառնում են իսլամ քրիս-
տոնականներին կալուածները, սպանում են, կո-
ղտատում, բռնաբարում են կանանց: Լրագրիւնք-
րի մէջ կարդում ենք այդ գաղանթներին մի
մի հազարի ցուցակ: Աւելորդ է յիշատակել
մանրամասնութիւնները, և կարող ենք միայն
այս հաստատել լինել, որ Կոստովօի աղետն
էլ մի հաստիկ չգործծ կը կազմէ եւրոպական
գիւղամասերի արեւմտեան:

Իսկ Կրեմլէն Ամստըր Էլ յարունակում է
նոյն դրութիւնը: Այս քիչ ձանձրացել է ոչ եւ-
րոպայի, որ զեռ թղթեր է գրում, ոչ կրեմլացի
քրիստոնեաները, որոնք կոխ են վարում օր ու
գիշեր, և ոչ կրեմլացի մանկատանները, ու-
րոնք այժմ աւելի ևս երես են առել, աւելի
հպարտ են և ուզում են իրանց կամը թելա-
գրել Եւրոպային:—Ինչպէս յայտնի է, վճռված է
տալ Կրեմլին ինքնակառավարութիւն: Բայց քրիստո-
նեաները, ինչպէս երևում է, չեն ուզում այս
անգամ յայտնով բաւականապէս: Նրանք պահան-
ջում են որ թիւրքաց զօրքերը հեռացվեն Կրե-
մլից և ինքնակառավարութեան ծրագիրը նախ հա-
ղորդվի յեղիպոսական ժողովին:—Կոն շատ կը
տեւէ բազմաշարք կղզու ներկայ դառն և
տաղանթալից դրութիւնը:

ՄԻ ՆՈՐ ԳՅՈՒՆՈՒԹԻՒՆ

Անգլիայի և Ամերիկայի Միացեալ-Նահանգ-
ների մէջ մի լուրջ անհամաձայնութիւն է ծա-
ղել, որը շատերի մէջ երկուց է ներշնչում թէ
կարող է նոյն իսկ պատերազմի առիթ դառնալ:
Միացեալ-Նահանգների արտաքին գործերի մի-
նիստը Շերման մի հեռագիր է ուղղել անգլիա-
կան կառավարութեան՝ Բեթլեհեմի ծովի և ձկնոր-
սութեան առիթով ծագած խնդրի մասին, որը
իր խիստ և զիջումատիւ մէջ չընդունված
անսովոր ոճով ահաղիկ ցնցում է առաջ բերել
Անգլիայում: Միացեալ-Նահանգների նախագահ
Մակ Կլինթոն խնդրել էր անգլիական կառավա-
րութիւնից զապահովել ջրամուկը որսայլ Բե-
թլեհեմի ծովում 1897 թիւ ընթացքում և մաս-
նակեց, ջրամուկի պահպանութեան համար
հոգս տանող և չափ ունեցող բոլոր պետութիւն-
ների հետ միասին մի կոնֆերանսիայի, որը
պէտք է գումարվի այդ հարցը լուծելու համար:
Անգլիական կառավարութիւնը մերժած լինելով
այդ առաջարկութիւնը, Շերման ուղղել է մի
խմբակ հեռագիր Նիւրն, որի մէջ ասում է թէ
միտող է աշխարհի աշխարհ Անգլիան պատաս-
խանատու է լարված յարաբերութիւնների հա-
մար, որոնք պէտք է հաստատվեն երկու ազգե-
րի մէջ անգլիական կառավարութեան այդ վար-
մունքի պատճառով: Շերման գտնում է, որ Անգ-
լիան պարտաւոր է համաձայնութիւն տալ կոն-
ֆերանսիային:

Այդ հեռագիրն առիթով «Morning Post» լրա-
գիրը հետեւեալն է ասում. «Բոլոր նշաններից ե-
րևում է, որ Մեծ Բրիտանիան ստիպված պէտք
է լինի կռիւ մղել իր գոյութեան համար Միա-
ցեալ-Նահանգների հետ, հենց որ աներկական
կառավարութիւնը կը համոզվի, որ կարելի է
անվտանգ պատերազմ սկսել: Մենք չենք պատ-
կանում այն մարդկանց թիւին, որոնք թիւթամբ-
տաբար են վերաբերվում Միացեալ-Նահանգնե-
րի հետ ունենալի ընդհարումին: Մենք զբոսից
աւելի սարսափելի աղէտ չը գիտենք: Մեր հայ-
րենակիցների պարտաւորութիւնն է հոգայ, որ
եթէ անկարելի լինի խուսափել այդ աղէտից,
գոնէ մեղաւորը իրանք չը լինեն և պարտաւոր

զանվեն ու ղեկավարվեն ամենալինական պե-
տական մարդկանց ձեռքով: Եթէ արտաքին գոր-
ծերի միւստրութիւնը, ծովակապետութիւնը և
զինուորական միւստրութիւնը կազմակերպված
լինէին նոր հիմունքներով, այն ժամանակ բրի-
տանական կայսրութիւնը կարող էր չափել իր
ոյժերը արեւմտեան մեծ պետութեան հետ:

«Daily Chronicle» գտնում է, որ Շերմանի
հեռագիրը զիջումատիւական քաղաքակարութեան
սահմաններից դուրս է եկել և լորդ Սոլսբերիին
իրաւունք ունի վերադարձնել այդ հեռագիրը
այն հիման վրա, որ բրիտանական կառավարու-
թիւնը սովոր չէ այդպիսի ոճով գրված հաղոր-
դագրութիւններ ընդունել:

Ամերիկական մամուլը, ընդհակառակը, գո-
վում է Շերմանի ընթացքը:

Ն Ա Մ Ա Կ Շ Վ Է Դ Ի Ա Յ Ի Յ

Ստ օ կ օ լ մ, յուլիսի 4/16-ին

V

Լ ր ա գ ր ու թ ե ա ն մ ի ջ ա զ գ ա յ ի ն հ ա մ ա-
ժ ո զ ո յ ի Ն Ս տ ք հ ո լ մ

Թերեա քիչ մը ոչ և ոչ այնչափ կարեւոր հա-
մարտի խօսք լրագրութեան միջազգային հա-
մաժողովին վրա՝ որ գումարուեցաւ ի Ստո-
հոլմ 13/25-էն մինչև 16/28: Բայց բնաւ
չը խօսվի ալ կրնայ իր արհամարհանք նկատուիլ
300 օտարականաց՝ զորս Շուէտ, և մասնաւորապէս
Ստոհոլմ, գրկաբաց ընդունեցան և արտաքին
կարգի չքեղ հանդէսներով և խրախուսեալ
գրկեցին և մեծարեցին, և եթէ հայ հասարա-
կութիւնն հետաքրքրէ չէ լսելու թէ այս 300 օ-
տարազգիք և 30 չուեռացիք ինչ խորհեցան և
որոշեցին լրագրութեան բարեօրէն համար, գոնէ
պէտք է գիտնայ, որ այդ բազմազգութեան ամ-
բոյնի մէջ կային անձինք՝ հայոց խորին երախ-
տագիտութեան արժանաւորը:

Լրագրութեան համաժողովը 1894-էն ի վեր
կը գումարուի ամեն տարի այս կամ այն բա-
ղաբը: Այնպէս անհետ Արեւմտահայկէան և Ու-
կար Բ-ի թագաւորութեան քանակահարկան
յորդանեցիներ որ յետ Անվերսայի, Բորդայի (Bor-
deaux) և Բուզապէսի՝ Ստոհոլմ ընտրվի
1897-ի գումարման համար ի պատիւ Շուէտի:
Պարբերական մամուլը ամեն գոյններն, ամեն
կուսակցութիւններն առատութեամբ ներկայա-
ցում էին ի համաժողովին,—աղաքական և
պահպանողական, թագաւորական, հասարա-
կագետական և ընկերակցական,—անաչառն՝
որ կաշառք կը մերժէ և համարութիւն միայն
կը խօսի, և վարձկանն՝ որ ոչ արգարութիւն
գիտէ, ոչ իրաւունք, ոչ մարդկութիւն, ոչ գիտու-
թիւն, և մամուլի սերուն համար՝ կամ սեկն
սպիտակ կըսէ լրագրութեան կամ բոլորովին կը
պապանձի,—քրիստոնեայն և սուտ քրիստո-
նեայն,—հիշայն և երկտաւար թուրք: Եւրո-
պայի 16 երկրներու լրագրիւնքն ունէին 325
ներկայացուցիչ, Աւստրիա 40, Բելգիա 14, Գաղ-
ղիա 73, Գերմանիա 52, Դանիա 16, Երիտա-
ւարդ Թուրքիա 1, Զուիցերի 2, Իտալիա 27,
Հոլանդիա 3, Հունգարիա 38, Նորվեգիա 14,
Շուէտ 30, Պորտուգալ 3, Ռուսաստան 1 (Emil
Schmidt, խմբագիր Պետերբուրգի լրագրի մը),
Սպանիա 1, Ֆինլանդիա 10: Հիւսիսային Ամե-
րիկայի Միացեալ-Նահանգներն յղած էին 5 լուծ-
բագիր, Հարաւային Ամերիկայէն՝ 14 Պատաս-
կամ Արգենտինա՝ 1, Հարաւային Աֆրիկէէն՝
Պրետորիա՝ 1, Ուլիանիայէն՝ Պատալիա՝ 1, ընդ-
ամենայն 333 ժողովականք: Անգլիայէն և անգ-
ղիական գաղթականութիւններէն չը կար ոչ ոք,
վասնի զի մինչև այժմ անգլիացիք հեռու կեցած
էին միջազգային լրագրութեան ընկերութիւնէն,
բայց սկսեալ 1898-էն, (որ տարւոյ համար Լիս-
բոնա որոշուեցաւ գումարման տեղի), իրենք ալ
պիտի մասնակցին ամեն համաժողովներուն:
Իսկ մեր հայերն ուր էին, ինչո՞ւ հայ լրագրու-
թիւնն չը յղեց գէթ մի միայն ներկայացուցիչ:
Ինչո՞ւ թուրքն առաւ կենդանութեան նշան, և
ոչ հայն: Եւրոպացիք պիտի ըմբռնեն մեր
ստոյգ օգուտը, Երբ, Երբ...
Շուէտի հիւրընկալութիւնն օտար մամուլ լուծ-
բագիրներուն՝ արդարեւ անօրինակ և անմասն
բան մը եղաւ: Մտածեցէք,—բնաւ ինձ բեւ-
զիցի մը յունիս 16/28-ին, երբ համաժողո-
վոյն փակմանէ ետքը բոլոր ժողովականք և
300-ին չափ հրաւիրեալ չուեռացիք՝ չորս չոգե-
նաներով Մեղաւ լին խաղաղ ալիքները կըտ-

րելով կերթային Ստոհոլմէն կէս ժամ հեռու,
Drottningholm ի արբունի զոհերն մէջ Ոսկար
թագաւորի ընթերցող վայելելու,—մտածեցէք որ
այն վայրկեանն ուր Շուէտի հողը կ'որհեցին
մինչև այս վայրկեանն՝ զրեթէ ոչինչ ծախսած
ենք: Մամուլէն ի Ստոհոլմ ձրի երկակողմի և
առաջին կարգ. պանդոկներն և բնակարաններն
ձրի, ճաշ և ընթերցող ձրի, որովհետեւ ամէն օր
հացկերով խորուեցաւ ի պատիւ մեր, և ինչ
մեծածախ հացկերովներ՝ գինիներու և չամպա-
նեայի աղնուազոյն տեսակներով: արճարաններու
մէջ սպասարարներն յանձն չէին առնուր որ
վճարենք սուրճը և ուրիշ ըմպելիքները, վասն
զի մեր կապոյտ—զեղրն նշաններէն կիմանային
որ անգամ ենք լրագրութեան համաժողովին:
Ստոհոլմի լրագրիւնքն յատկապէս մեզ համար
գաղղիներէն լեզուով խմբագրված թերթեր ար-
պեցին և ձրի բաշխեցին, որպէս զի հեռագրա-
կան վերջին լրերուն տեղեկակ ըլլանք: Մենք
ալ, ըսաւ, Բելգիայ մէջ մեծարեցիք օտար
մամուլը ներկայացուցիչները, բայց մեր հիւրըն-
կալութիւնն ոչ ինչ էր չուեռացուց հիւրընկա-
լութեան քու, և չեմ կարծի որ ուրիշ ազգ մը
կարենայ գերազանցել չուեռացիները յայտ մա-
սին: Hasselbacken-ի ճաշարանին մէջ ալ տըր-
ւած հացկերութիւն օրը Յուլիոս Կլարսի (Ju-
les Klaretie), Պարիսի Գաղղիական թէատրոնին
վարիչն, անգամ գաղղիական Ախալիկայ և խմբ-
բագիր «Temps» լրագրի, բանի մը բառով, բայց
շատ գեղեցկապէս, յայտնեց գաղղիացոց սքան-
չացումը. «...Շուէտի մէջ, ըսաւ, գաղղիներէն
լեզուի դաս մը առած պիտի ըլլանք, փոխանակ
սկզբնական հիւրասիրութեան հին ասացուածին՝
պիտի ըսենք չուեռացի հիւրասիրու-
թիւնն:» (....Nous aurons pris en voyage une
leçon de francais en Suède; au lieu du vieux
proverbe qui parle—de l'hospitalité écossaise
nous dirons: L'hospitalité suédoise.)
Ուշմութեամբ և գիպողաբար վատնած զը-
րամն երբեք չը կորսուի, և չուեռացիք պիտի
կլին իրենց առատասիրտ աստիճանութեան
պտուղը: «Գո՞ն էք մեր երկրէն, հարցուցի ուրիշ
բելգիացուց մը, և կարծեք որ հեռուոր Շուէտը
արժանի է այցելութեան:»—«Գոհութեանս չափ չը
կայ, պատասխանեց, չը գիտեմ թէ աւելի երկիրը
գովմ, թէ երկրացիները: Շուէտը ճանաչելու
համար քանի մը օրն անհրաժեշտ է, կրկին պի-
տի դամ, և լրագրի մէջ պիտի յորդորեմ բել-
գիացիները որ իրենք ալ գան տեսնեն այս սի-
րուն աշխարհը:»

Հայերն ունէին անտարակոյս շատ բարեկամ-
ներ համաժողովին մէջ, բայց ինձ կարելի չե-
ղաւ ծանօթանալ ամենուն ի մեծ արտօնութիւն
սրտիս բացակայ էր «Daily News»-ի խմբագրու-
թիւնն, բացակայ էին նոյնպէս Հայր Charmet-
tant, Drumont, Lavisse, Bergerat, Rochefort,
Clémenceau, Victor Bérand, գերմանացի Բով-
հաննէս Lepsius, կային միայն երկու Զուիցերա-
ցիք, O. Hirt, և գնդապետ Ed. Secrétan (խմբ-
բագիր «Gazette de Lausanne»-ի): Խմբ խմբ
պղծաբանով, մէկուն մէկային հարցներով, վեր-
ջապէս յաջողեցաւ գտնել Secrétan գնդապետը՝
այն պահուն որ Drottningholm-ի արբունական
ընթերցէն ետքը զոհերն գեղեցիկ պարտիզին
մէջ սուրճ կը հրամցուէր մեզ, և ըսի, «Գըն-
դապետ, առաւոյտս ի վեր զձեզ կը փնտռէի,
և ուրախ եմ որ օրս չը կորուսի: Ես Շուե-
տացի եմ, բայց ծնած եմ հայ, չը գիտեմ թէ
ձեր փորձիկ երկիրն ինչ մեծ մարդասիրութիւն
ցուցուց թշուառ հայ ազգին: Երբ դառնաք ի
Լոզան՝ յիշեցէք որ Drottningholm-ի պարտիզին
մէջ հայ—չուեռացի մը՝ յանուն անտէր և ան-
պաշտան հայոց իր ջերմագոյն կրտսերագի-
տութիւնը յայտնեց յանձնի ձեր աղին Զուիցե-
րոյց: Պատահմամբ ծանօթացաւ նաև երիտա-
ւարդ Թիւրքիայի ներկայացուցիչն՝ որ կը կոչուի
Էմիլ Արսլան, ըսաւ թէ ինք Լիբանանցի Գրուզ
(Druse) է, խմբագիր «Մէշ Է Է Է Է Է» և «Մի-
ղան» լրագրիւնքուն, և թէ Պարիս կը բնակի:
«Հայոց կոտորածներուն հաւան էք թէ ոչ, հար-
ցուցի: Պատասխանեց, «Բնաւ ամենին, ես այն
թուրքերէն եմ որ թուրքաց մեծագոյն թշնամին
կը համարեն Արգիւլ Համիդը: «Մէշ Է Է Է Է Է»
և «Մի րդանի» մէջ հայոց կոտորածներուն առ-
թիւ յօդուածներ գրեցի: Երբ այնպիսի սաստիկ լեզ-
ւով որո՞ւ նման և ոչ իսկ հայերն գործածե-
ցին: Իմ սկզբունքս է երբեք չը հաւատալ թուր-

քի խօսքին, նոյն իսկ երիտաւարք Թիւրքի: Բայց
այս պարագայի մէջ կը մաղթեմ որ Էմիլ Արս-
լան հիմարտութիւնը խօսած ըլլայ:
Նորայր Ն. Բիւզանդացի

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Թ ա վ ր ի զ, յուլիսի 2-ին
Անգաղար անձրևներից յունիսի 25-ին գոյա-
ցաւ մի հեղեղ, որ վերջին 20 տարվայ ընթաց-
քում ոչ ոք չէր տեսել այստեղ: Նոյն օրը երե-
կոյեան ժամը 3 1/2-ին սկսվեց և տևեց մինչև
միւս օրը: Այդ օրը խառնութիւնի մեծ մասը
փակեցին, առաւելապէս պարսիկները և գնացին
«Թամաշա» անկում: Հեղեղը գալիս էր քաղաքի
հարաւ-արեւելեան կողմից: Հեղեղի միասը շատ են
համարում, ինչպէս լսվում է, 400-500 տուն է փլել
և կան-կարասիք տարել, իսկ քանի մարդ է զոհ
գնացել հոսանքին՝ այդ յայտնի չէ: Պարսիկ ամ-
բոյնը այս բնական երևոյթը Աստուծու պատիւ
է համարում, իբր ուղարկված պարսիկներին հա-
յերին կողոպտելու համար: Աստուծու են, որ մի
այսպիսի հեղեղ էլ պատահել է 1872 թիւին:

Վերջին խառնակութիւնները մի կողմից, իսկ
անախող առևտուրը միւս կողմից՝ աղբատարներ
են ժողովուրդը: Հայերից մի քանի հոգի մասն-
կացել են Տեղապահ հ. Սարգսեանը ուղեորվել
է Թաւրիզի շրջակայ գիւղերը:—Մուծաբար, Ղա-
րաղաղ և այլն շրջելու համար:

Ռչտունի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յոյն-թիւրքական պատերազմում նշանաւոր
հանդիսացած թիւրք փաշաներին սուլթանը պի-
տի ընծայէ պատուաւոր սեր, որոնց վրա, ինչ-
պէս հաղորդում է «Politische Correspondenz»
լրագիրը, կը լինի հետեւեալ մակագրութիւնը
նոյն տառերով. «Յանուն ամենազգեալ Աստու-
ծու, որ յաղթութիւններ է պարգևում: Այս սու-
րը, որ օսմանցիներին համար յաղթութեան և
քաջութեան ամենափայլուն նշան է և կարող
է յանձնվել որդիներին և որդիների որդիներին,
նորսել է նորին մեծութիւն սուլթանը Ղազի...
փաշային, իբրև նշան գնահատման քաջութեան և
հաւատարմութեան, որոնց ապացոյցները նա
տուել է Յունաստանի դէմ վարած յաղթական
պատերազմի ժամանակ. թող այս փառաւոր ըն-
ծան տանէ դէպի բազմաթիւ նոր յաղթութիւն-
ներ:»
Անուշ երազներ...

Թայտնի է որ օղաղաց Անդրէ այս ա-
մառ ձեռնարկեց մի ճանապարհորդութիւն
կատարել օղապարկով դէպի հիւսիսային բեւե-
ռը: Ինչպէս հաղորդում է Բերլինի «Local Anzei-
ger» լրագիրը, յունիսի 29-ին Անդրէ՝ Շպից-
բերգէնից բարձրացել է արդէն իր երկու ըն-
կերների՝ Ֆրենկլէյի և Ստրինաբերգի հետ: Երբ
օղապարկը արդէն բաւական բարձրացել էր,
Անդրէ և իր ընկերները հանգիստ գլխարկներ
և պոտապիւն «Hilsen bjemme tie Sverige» (Բա-
րեկեցէ՛ք տանը Շվեդիայում): Մինչև այսօր տե-
ղեկութիւն չը կայ Անդրէի մասին: Վերջերս
թէն Շվեդիայում մի սուրհանդակ աղանձի բեռ-
նեցին, բայց յետոյ յայտնվեց, որ նա Անդրէյի
կողմից չէ: Եւ համար յանդուգն օղաղացը իր
նպատակին—հիւսիսային բեւեռին, թէ զոհ կը
գնայ իր համարձակ ձեռնարկութեան—հաս այն
հարցը, որով հետաքրքրվում է ներկայումս ամ-
բողջ Շվեդիան և գիտնական աշխարհը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՑ

Կ. ՊՈԼԻՍ, 12 յուլիսի Գեոպանների և Տէվ-
ֆիկ փաշայի մէջ համաձայնութիւն կայացաւ
սահմանի վերաբերեալ խաղաղութեան սկզբ-
նական դաշնագրի խմբագրութեան մասին:
Թիւրքիան ընդունեց զինուորական կցորդնե-
րի նախագիծը տեխնիկական բնաւորութիւն
ունեցող փոքր փոփոխութիւններով, որոնք և
փաւերացվեցին պետութիւնների կողմից: Ամեն
կողմից տեղեկութիւններ են ստացվում, որ
թիւրքերը սկսել են հեռանալ Թեսալիայից:

Կ. ՊՈԼԻՍ, 12 յուլիսի խաղաղութեան բա-
նակցութիւնների առիթով երէկվայ կազմած
նիստում թիւրքիան դատար համաձայնութիւն
տուեց որոշած սահմանի համար, որով կատար-
ված է համարվում խաղաղութեան ամենանշա-
նաւոր պայմաններից մէկը: Գիւյօժմատիական
չրջաններում յոյս ունեն, որ չուտով կը լուծ-
վին և միացած հարցերը, որովհետեւ սուլթանը
շատ է ցանկանում շուտով կնքել հաշտու-
թիւնը:

ԿՕՊԷՆՀԱՅԷՆ, 12 յուլիսի: Յուլիսի 11-ին
հանդիսաւոր ճաշին թագաւորն առաջարկեց
Սիամի թագաւորի կենացը, իսկ Սիամի թագա-
ւորը առաջարկեց թագաւորական գոյգի կենա-

